ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՇԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝ Շաղկունքի գյուղպետարան
հեռախոս 4 – 74 - 88

« 29 » 07. 2011թ թիվ 126

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Ա Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Շաղկունք գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 27-ին կայացած թիվ 10 նիստի որոշումները:

Շաղկունք համայնքի
ղեկավար Դ Կարապետյան

ՇԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04703684 ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Ստացված թիվ 7763-11
«09» 08 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

27-ը Հուլիսի 2011 թվականի N1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1.Հաստատել Արմավիրի մարզի Շաղկունքի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 27-ի N10 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ Գ. Կարապետյան
Բ. Ալեքսանյնան
Ս. Վարդանյան
Վ .Եղիազարյան
Հ. Երանոսյան

Համայնքի ղեկավար՝ Դ Կարապետյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2011
թվականի հուլիսի 27-ի N 1 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի 2 –Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

27-ը հուլիսի 2011 թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ի N2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի70-րդ հոդվածի 3-րդ մասով

ՈՐՈՇԵՑ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ծաղկունք գյուղական համայնքի 2010 թվականի նոյեմբերի 10-ի N 2-Ն «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղական համայնքի 2011 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանելու մասին » որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Որոշման հավելվածը լրացնել նոր կետերով հետևյալ բովանդակությամբ ՝

«6.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակա - ռավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝2.0հազ. / երկու հազար/ դրամ.

7.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 2.0 հազ. / երկու հազար / դրամ.

8.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 5.0 հազ./ հինգ հազար / »

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը :

Ավագանու անդամներ՝

Գ. Կարապետյան
Բ. Ալեքսանյան
Ս. Վարդանյան
Վ .Եղիազարյան
Հ. Երանոսյան
Դ Կարապետյան

Համայնքի ղեկավար՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2011
թվականի հուլիսի 27-ի N 2-ն որոշման

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք գյուղական համայնքի ավագանու 2010
թվականի նոյեմբերի 10-ի N 2-ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, նոր շենքերի շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանում է՝
հիմնական օբյեկտների համար
1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յուրաքանչյուրը 10.0 հազ / տաս հազար / դրամ :
2.Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար. եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծով
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական փոփոխություն յուրաքանչյուրը 3.0 հազ / երեք հազար / դրամ:
3. Համայնքի վարչական տարածում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուրը 5.0 հազ. / հինգ հազար/ դրամ
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար յուրաքանչյուրը 5.0հազ /հինգ հազար/ դրամ :
2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար յուրաքանչյուրը 5.0 հազ/ հինգ հազար / դրամ :
5.Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170.0 հազ / հարյուր յոթանասուն հազր / դրամ

6.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝2.0հազ. / երկու հազար/ դրամ.

7. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությաուններ դիմաց փոխհատուցման վճար 2.0 հազ. / երկու հազար / դրամ.

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 5.0 հազ./ հինգ հազար / դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

27-ը Հուլիսի 2011 թվականի N 3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1 – ին մասի 3-րդ կետով, « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շաղկունք գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 19-ի« Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շաղկունք գյուղական համայնքի 2011թվականի բյուջեն հաստատելու մասին » N 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Բյուջեի եկամտային մասում վարչական գանձումներ տողում նախատեսել տեղական վճար 50.0հազ./ հիսուն հազար / դրամ,և մեքենաների գույքահարկը ավելացնել 300.0 հազ. / երեք հարյուր հազար/ դրամով և նույնքանով ավելացնել 08.2.4 խումբ ենթախմբի 4239 « ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածին:

01 1 1 խումբ ենթախմբի 4112 « պարգևատրումներ » հոդվածի գումարը պակասեցնել 300.0հազ. / երեք հարյուր հազար / դրամով և ավելացնել 08.2.4 խումբ ենթախմբի 4239 « ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածին:

01 6 1 խումբ ենթախմբի 4239«ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածի գումարը պակասեցնել 50.0հազ / հիսուն հազար/ դրամով և ավելացնել 08.2.4 խումբ ենթախմբի 4239 «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

27--ը Հուլիսի 2011 թվականի N 4

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1 – ին մասի 3-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավրի առաջարկությունը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 4239 « ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածից տրամադրել 400.0հազ. /չորս հարյուր հազար / դրամ համայնքում մեծահասակ բնակիչների համար ամառային հանգիստ կազմակերպելու համար և տրամադրել 100.0հազ. / հարյուր հազար / դրամ «սեպտեմբերի 1-ի» կապակցությամբ համայնքի առաջին դասարանի երեխաներին պայուսակներով և գրենական պիտույքներով ապահովելու համար
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից;

Ավագանու անդամներ՝ Գ. Կարապետյան
Բ. Ալեքսանյան
Ս. Վարդանյան
Վ .Եղիազարյան
Հ. Երանոսյան

Համայնքի ղեկավար Դ. Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԿՈՒՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

27--ը Հուլիսի 2011 թվականի N 5

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1 – ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավրի առաջարկությունը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Շաղկունք գյուղական համայնքի թվով սոցիալապես անապահով 13 ընտանիքների տրամադրել դրամական օգնություն 440.0 հազ. /չորս հարյուր քառասուն հազար/ դրամ գումարի չափով ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից;

Ավագանու անդամներ՝ Գ. Կարապետյան
Բ. Ալեքսանյան
Ս. Վարդանյան
Վ .Եղիազարյան
Հ. Երանոսյան

Համայնքի ղեկավար՝ Դ. Կարապետյան

ՇԱՂԿՈՒՆՔ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՎԱԳԱՆԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ 04703684

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք գյուղական համայնքի
ավագանու 2011 թվականի հուլիսի 27-ի
N 5որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Բաղդասարյան Հովհաննես Սամվելի - 30000
2. Կարապետյան Աղասի Արշալույսի - 30000
3. Վարդազարյան Եղիշ Թաքուլի - 30000
4. Թաքոսյան Սվետլաննա - 50000
5. Այվազյան Արաքսի - 30000
6. Ղմբարյան Մարիետտա Պողոսի - 30000
7. Մանուկյան Մուրադ Մարտիրոսի - 30000
8. Կյուրեղյան Գևորգ Սոսի - 50000
9. Վարդանյան Անդրուշ Սարգիսի - 30000
10. Մինասյան Բենիկ Բորիսի - 30000
11. Ալեքսանյան Նարեկ Բախշիկի - 30000
12. Հակոբյան Գուրգեն Հայրապետի - 35000
13. Խաչատրյան Ալվարդ Վիրաբի - 35000